

3689

Имеруцелин


Императорский  
театр


4.7.1912

891.99

5-35







ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՐԾԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱՎԱԶԱՐԱՆՈՅԻ

# ՄԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՔ

ՀԵՐԵՎԱՐՆԵՐ

ՄԱՐԶԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՐՏԱՎԱՐԱՐՆԵՐ

891.99մ  
Մ-35




891.99.5

Ա-35

ԱՐՄԱՆԱԿԱՆ  
ՄԱՐԶՊԵՏ

# ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

## ՀԵՔԻԱԹՆԵՐ



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԻՒՆ

Ա. ԳԻՐՔ

(6-7 ՏԱՐԵԿԱՆ ԵՐՍԽԱՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ)

Պատկերազարդեց

Տ. ԵՍԱՅԵԱՆ

1912

Ա. ԳԻՐՔ

Հրատարակութիւն

ԱՐՄԻՒ ՃՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱՎԱԶԱՌԱՆՈՑԻ

5284

ՏԱՐԱՆ ԵՎ ԿԱԶՄԱՑՈՒՆ

Օ. Ա. Բ. Յ. Ա. Խ. Ա. Հ.

№ 103



3331  
g 47

2004

## ՅԱՌԱԶԱԲԱՆ

—>>>\*<<<—

Պատմութիւնը , ինչպէս միւս առարկաները , կը սկսի տարրական դպրոցի Ա. տարիէն խալ (6—7 տարեկան երախաներ) :

Սուսոց հետարքութիւնը շարժող , երեւակայութիւնը վառող , և միանգամայն հասկնալի պատմութիւնը հելիարն է — արդիւնք ժողովուրդներու մանկական հասկի ստեղծագործութեան :

Ինչպէս միւս առարկաներուն , պատմութեան դասաւանդութեանն ալ պիտի համեմնք անցնելով աստիճաններէ — դիւրինէն սկսելով դէպի ի դժուար , պարզէն՝ բարդ : Մեր տարրական դպրոցին համար մենք այդ տափանները կը դասաւորենք հետեւեալ կերպով .

Ա. Հետեարներ

Բ. Ռոբինզոն

Գ. Սասունցի Թաւիք

Դ. Հայրենի աւանդութիւններ

Ե. Հայոց պատմութիւնը իր սկիզբներէն :

Ամբողջ գասպարնթացքը մանկավարժութեան պահանջներուն համեմատ պատրաստուած ըլլալով «Մանկական Աշխարհ» ընդհանուր անտառն տակ, առաջին անգամ լոյս կ'ընծայենք ներկայ «հեքիաթներ»ը :

Բոլոր առարկաները պէտք է իրարու հետ աղեքս ունենան, ներքին կապ մը, զիրար գրկեն և լրացընեն; Մանկական միտքը անջրագետներ և ոստումներ չի սիրեք—Alles jueckenlos: Մանսաւանդ պատմութիւնը և ընթերցանութիւնը իրարմէ անբաժան պէտք է աւանդուին, զանոնք իրարու հետ ատանելու է զուգահեռական գծով:—

Նախ պէտք է պատմելով և պատմել տաղով նիւթը ծանօթացնել, յետոյ զայն կարդացնել.—ծանօթին գէպ ի անծանօրը: Պատմութեան ընթացքին ամէն գժուարութիւն հարթուած կ'ըլլայ և կը գիւրանայ ընթերցանութիւնը, իսկ սա արդէն հետաքրքիր է մանկան համար, քանի որ ան իր ծանօթ և սիրած նիւթերու մէջ է որ կը զբունու:

Ուրեմն մեր գիրքը պատմութեան և ընթերցանութեան գիրքէ միանգամայն աշակերտին ձեռքը տալու համար, և այս ոչ միայն առաջին ասրին, այլև յաջորդ տարիները:

Առկէ զատ ան կոչուած է ընթերցանութեան գիրք մ'ըլլալ մեր մատաղ սերունդին ձեռքը և գրդում մը տալ մշակելու համար տաճկահայ մանկական գրականութիւնը, որ գրեթէ գոյութիւն չունի: Մենք չունինք մանկական հանդէս, չունինք մանուկ սերունդին համար կարդալու գրքեր:

Հեքիաթները առած ենք մեր ժողովրդական յայտնի գրողներու հաւաքածոներէն, օգտուած ենք նաև գիրմանական աղբիւրներէ: Մեր այս դասընթացքի համար


պատրաստած ըլլալով մեթուական ուղղեցոյց մը , մանկա-  
վարժական ընդարձակ և լայն տեսութեամբ , հոս չենք  
շօշափեր դասաւանդութեան ձեւն ու եղանակը :

**ՄԱՐԶՊԵՏ**

---

**Մ Ա Մ Լ Ո Յ Տ Ա Կ Ե Ն՝**

- Ա.) Ռոբենզոնի պատմութիւնը , (Քաղաքակրթութեան  
աստիճանական զարգացումը մանկան ըմբռնելի  
եղանակով և պատմութիւնով .)
- Բ.) Սասունցի Դաւիք (Ղիւցազնական աշխարհ  
Գ.) Հայրենի աւանդութիւններ (աւանդական Աշխարհ)  
Դ.) Հայոց պատմութիւն  
Ե.) Մանկավարժական տեսութիւններ եւ Ռողեցոյց «Ման-  
կական Աշխարհի» :





# ՀԵՔԻԱԹՆԵՐ

4.

## 1.

ՄԿ-ՀԱԿ ՄԿ-ՀԱԿ ՄԿ-ՀԱԿ

### 1.

Մուլատ և Սեպուհ երկու ընկերներ էին : Երբ ձիւները հաղեցան և գարունը բացուեցաւ՝ անոնք ձի հեծան և ճամբայ ելան հայաստանի մէջ պատելու :

Մայիս ամսուն հասան Սալնոյ-Զոր : Հոս է Բաղէշ քաղաքը : Գեղեցիկ է Բաղէշի գարունը , ծառերը կանաչ տերեւներ կը հագնին , լեռները ծաղիկներով կը ծածկուին , աղբիւրներէն պաղուկ ջուրեր վար կը վագնի :

Բաղէշի Զորին ծառերուն վրայ առտուները և իրիկունները ամէն տեսակ թոչուններ կ'երգեն իրենց անուշ երգերը : Այս թոչուններէն մէկը հազար տեսակ երգ գիտէ , — անոր համար ալ հազարան թիւլրիւկ կ'ըսուի :

Հազարան բիւլիւլը առաջ աղջիկ մըն  
էր Զանազան անունով : Անոր գլխուն վրայ  
մինչև այսօր կայ սանտր մը :

2.

Զանազան Սահակ անուն եղբայր մը  
ունէր : Երկուքն ալ որք էին , չունէին հայր ,  
չունէին մայր :

Իրիկուն մը կանաչ խոտերու մէջ աղ-  
բիւրին գլուխը նատած , Սահակ քրոջը մա-  
զերը կը սանտրէր : Երկինքէն արծիւր իջաւ  
և Սահակը թեւերուն վրայ առներով փախ-  
ցուց :

— Վայ... ճշաց Սահակը : Քրոջը սիրտը  
ելաւ ցաւէն և Աստուծոյ դառնալով ըսաւ .

— Աստուծած իմ , ինձի թոշունի թեւեր  
տուր , թոշիմ եղբօրս հասնիմ :

Աստուծած լսեց անոր ձայնը : Զանազան  
թոշուն դարձաւ . Սահակին ձեռքի սանտրն  
ալ անոր գլուխը մնաց :

Այն օրէն ի վեր ծառեր ու դռներ կը  
թափառի , լեռներ ու անտառներ կը թոշի  
ու տերեւներու մէջէն տիտուր ձայնով մը  
կը կանչէ .

— «Սը-հակ , Սը-հակ , Սը-հակ : »

Ասիկա հազար տեսակ ցաւ ունի և հա-



Երիկոն մը աղքարիս զրոյսը հստած Սահակ յոցը  
մազերը կը սահսրէր :

զար տեսակ երդ կ'երգէ : Անիկա հազարան  
թիւլքիւն է :

Ամեն իրիկուն, արեւը մարը մտնելէն  
ետքը, կը լսէք անոր սրտաշարժ ձայնը :


— «Սը-հակ, Սը-հակ, Սը-հակ .»

Մուրատ և Սեպուհ լսեցին այս ձայնը  
և զմայլեցան :



## 2.

### Զ, 5 ՊՌՕՇ ԹԱԳԱԽՈՐԻՆ ԹՌԽԾԸ



#### I.

Հայաստանի մէջ կան շատ մը վազուն  
ջուրեր, կապուտակ լիճեր :

Ապահունեաց գաւառին մէջ կայ Խաչ-  
լուայ պղտիկ լիճը, որ փոռւած է Բլէճան  
լեռան ոտքերուն տակը :

Բլէճան լեռան վրայ հին, շատ հին  
ատենները Պոօշ թագաւորը ունէր ամուր  
բերդ մը :

Թագաւորը այդ բերդին մէջ կը նստէր,  
մէջքը կը կապէր կայծակ թուր մը :

Շատ զօրիաւոր էր և ոյժով , ամէն մարդ  
իրմէ կը վախնար :

Պոօշ թագաւորը եօթը տղայ ունէր :  
Ամեն մէկին համար շինել տուած էր բերդ  
մը , և կը նստեցնէր անոնք զատ զատ տեղեր :

2 .


Թագաւորը երկար ապրելէ ետքը ծե-  
րացաւ : Երբ որ մահուան օրերը մօտեցան ,  
ըստ .

— Աշխարհի վբայ չկայ բան մը , որ իմ  
թուրիս դէմ դնէ : Իմ մեռնելէս ետքը այս  
թուրը որ տղուս քով որ մնայ , անիկա միւս  
վեցը պիտի սպաննէ :

Եւ որպէս զի իր մեռնելէն վերջ տանը  
հանգստութիւնը շխանգարուի , կանչեց մեծ  
տղան , թուրը տուաւ անոր ու ըստ .

— Տղաս տար լիճը նետէ այս թուրը :  
Մեծ տղան հօրը խօսքը մտիկ չըրաւ  
թուրը պահեց իր քով , ետ դարձաւ հօրը  
ըստ .

— Հայրիկ , թուրը նետեցի լիճը :  
Պոօշ հարցուց . «Բնչ եղաւ լիճը : »  
— Բան մը չեղաւ , ըստ մեծ տղան .  
— Դուն սուտ կը խօսիս , թուրը պահեր  
ես , գնա բեր :



Թագաւորը շատ. — Տղա՛ս, սար հետ այս բուրը  
լաին խորը...

Պոօշ առաւ թուրը և տուաւ միւս  
տղոցը , որ տանին լիճը նետեն :

Ամենքն ալ մեծ եղբօր ըրածին պէս  
ըրին :

Թագաւորը ամենէն վերջը թուրը տուաւ  
իր պղտիկ տղուն ու ըսաւ .

— Տղաս , տար այս թուրը լիճը նետէ :

Պղտիկ տղան տարաւ թուրը լիճը նե-  
տեց . ետ դարձաւ ու ըսաւ հօրը .

— Հայրիկ , ջուրերը պղտորեցան , ձու-  
կերը դուրս թափեցան , կիւռ կիւռ ձայներ  
ելան լիճին խորերէն :

### 3.

Ուրբաթ օր մըն էր որ պղտիկ տղան  
թուրը ձգեց լիճը :

Այն օրէն այսօր ամեն ուրբաթ լիճը կը  
փոթորկի , ջուրերը կը խառնուին ու կը  
պղտորին :

Խումբ մը քաջեր ծովուն տակը բոնած  
են թուրը , ուրիշ խումբ մըն ալ ուրբաթ  
օրերը կուգան , որ անոնց ձեռքէն խղեն  
զայն :

Անոնք իրարու հետ կոխւ կ'ընեն , այդ  
կոխւէն ջուրերը կը խառնուին և կ'արիւնո-  
տին :


Պոօշ ուխտ ըրած է որ երբ ծովը ցամքի,  
իր թուրը բռնող ձեռք մը աշխարհ գայ :  
Անոր դիմաց ոչ իշխան պիտի դիմանայ , ոչ  
ալ թագաւոր : Կայծակ թուրը բռնողը գիւղը  
պիտի ազատէ ու մաքրէ դեւերէն :

Ամեն օր լիճէն ջուրը կը վազէ կ'երթայ ,  
բայց բնաւ չի պակսիր :



### 3.

## Տ. Վ. ԱՌԻՒԻԾ ՄՀԵՐ



### I.

Սասունը լեռնոտ աշխարհ մըն է : Հոն  
շատ ցորեն չի բուսնիր : Մարդիկ ցորենը հե-  
ռու տեղերէ կը բերեն էշերու , ջորիներու  
վրայ բեռցուցած ու վերջը հաց կը թիւն  
իրենց թոնիրներուն մէջ :

Տարի մըն ալ մէծ , ահոելի առիւծ մը  
բոյն գրաւ Սասունի ճամբուն վրայ : Գացող  
եկողը կ'ուտէր , կը լափէր : Մարդիկ իրենց  
վախէն լեռներէն վար չիջան , ցորեն չկրցան  
բերել , հացերնին հատաւ և անօթի մնացին:  
Պղտիկ տղաները անօթութենէ կը մեռնէին ,  
մէծերը խոտ կ'ուտէին :

Է Է  
Դ Բ

2.

Սասունի իշխանը օր մը նստած կը  
մտածէր, թէ ինչ պիտի ըլլայ իր ժողովուրդը:  
իր տասն ու մէկ տարեկան տղան՝ Մհերը  
մտաւ հօրը սենեակը և հարցուց .

— «Ի՞նչ կը մտածես հայրիկ, ի՞նչու կը  
նեղուի մեր ժողովուրդը: Ես պիտի երթամ,  
կոիւ ընեմ Առիւծին դէմ, անոր բերանը  
պիտի պատոեմ, ճամբան պիտի բանամ:

— Որդի, ըստ հայրը, դուն պզտիկ ես,  
դուն տեղդ նստէ, թուրը չի կարեր անոր  
միսը, նետը չի ծակեր անոր կաշին, անիկա  
քեզ ողջ ողջ կ'ուտէ:

— Զէ, հայրիկ, չէ, ես չեմ վախնար  
անկէ. ես կ'երթամ. կամ կը մեռնիմ կամ  
Սասունը կ'ազատեմ սովէն, ըստ Մհեր :

Եւ լարեց աղեղը, ճամբայ ելաւ Առիւծը  
վնտոելու :

3.

Գնաց, գնաց և գտաւ Առիւծը: Ի՞նչ  
տեսնէ աղէկ. տեսաւ գազանը աչքերը ա-  
րիւնով լեցուած կատղած կը գոռայ: Անոր  
ձայնէն լեռ ու ձոր կը թնդան: Բոլոր գա-

3331

ԿԴ



Ունիս պահագ Սանկուծիկ կը կառաւ պատմելով երին ի սր զբա :



զանները ու թռչունները վախէն մտեր են  
իրենց ծակերը :

Առիւծը Մհերը տեսնելուն պէս տեղէն  
վեր թռաւ ու այնպէս գոռաց, որ կարծես  
երկինք փլաւ : Մհեր չվախցաւ, մօտեցաւ  
անոր : Երկու կողմէն իրար բռնեցին և  
կոփւը սկսաւ : Չորեր ու լեռներ դզրդացին  
անոնց կոփւէն : Մհերը ու Առիւծը քաշքա-  
ցին իրար : Մէկէն Մհեր գաղանին պլուխը  
բռնեց ու այնպէս զարկաւ գետին, որ հողը  
ճեղքուեցաւ, գաղանը մէջը առաւ : Մհեր  
բռնեց կզակէն և բերանը պատռելով երկու  
կտոր ըրաւ :

Յաղթութեան լուրը տարածուեցաւ  
Սասունի մէջ : Ժողովուրդը դիմաւորեց և  
ուրախութեան աղաղակներով տուն տարաւ  
Մհերը : Այդ օրէն Սասունցիները անոր ա-  
նունը դրին Առիւծ Մհեր :

Ճամբանները բացուեցան, ամեն կողմէն  
ցորենի բեռներ հասան, հացի գինը աժան-  
ցաւ . Սասուն աղատեցաւ սովէն ու փոր-  
ձանքէն :



## 4.

### ՍԱԼՄԱՆ ԵՒ ՌՈՍՏՈՄ

1.

Սալման անուն կտրիճ, հսկայ մարդ  
մը կար:

Զկար մարդ որ անկէ չվախնար:

Սալման կը բնակէր աշխարհի մէկ ծայրը,  
համբաւը հասեր էր աշխարհի չորս ծայրը:  
իրեն յարմար ալ ձի ու գէնք ունէր: Ուր  
որ հասնէր տուրք կ'առնէր, չտուռղը կը  
սպաննէր:

Երկրի մէկ կողմն ալ Զալ անունով ու-  
րիշ ոյժով մարդ մը կար: Ասիկա Ռոստոմ  
անուն տղայ մը ունէր: Ռոստոմ հսկայ  
մարդ մըն էր ու շատ կտրիճ:

Մինակ Զալի երկիրը տուրք չէր տար  
Սալմանին.

2.

Օր մը Զալ ձին հեծաւ, համբայ ելաւ  
Սալմանը տեսնելու: Գնաց, գնաց, տեսաւ

որ հեռուէն մուխ մը կ'ելլէ։ Դիմացը մարդ  
մը ելաւ ձի հեծած, բլուրի պէս բարձր։  
Բերանը չիբուխ մը դրած կը քաշէր։ Զիբուխը  
գերանի մը հաստութիւնն ունէր։

Չալ իր զէնքերը պատրաստեց, ուզեց  
կոռւիլ, բայց ձիաւորն անոր երեսն անզամ  
չնայեցաւ։

Այս բանը իրեն ամօթ ուեպեց Չալ։  
Գնաց եկաւ նիզակ մը զարկաւ։

Սալման բոնեց անոր վիզէն, կապեց  
ձիուն պոչէն ու տարաւ վրանը, ականջը  
գամեց վրանի սիւնին, ինքն ալ պառկեցաւ,  
քնացաւ։

Չալ բարկութենէն պիտի ճաթէր։ Բայց  
ինչ օգուտ։ Երբ Սալման արթնցաւ, հար-  
ցուց։

— Տղա՛յ, դուն ո՞վ ես։

— Ես Չալի երկրէն եմ։

Վախէն իր ով ըլլալը չըսաւ։

Սալման ելաւ ականջէն գամը հանեց  
ու ըսաւ։

— Գնա՛, Ռոստոմին ըսէ, որ ինծի հնա-  
զանդի, եթէ չուզէր թող գայ որ չափուինք։  
Աշխարհի երեսին երկու զօրաւոր մարդ չը-  
լար, մէկ զօրաւոր ըլլալու է, այն ալ ես եմ։  
Իմ անունս Սալման է։

3.

Չալ դարձաւ տունը, սրտի ցաւէն ախ  
քաշեց։ Ծոստոմ հօրը հարցուց թէ ի՞նչու  
ախ կը քաշէ։ Հայրը պատմեց իր գլխուն ե-  
կածը։

Ծոստոմ առաւ հետը իր քեռորդին՝ Վա-  
ժանը։ Մտաւ տէրվիշի կերպարանք, մէկ  
մէկ թմբուկ առին ու ճամբայ ելան։ Ծոս-  
տոմ համբուրեց իր ձիուն աչքերը ու հօրը  
բաւ։

— Երբ որ պէտք ունենամ ձիուս, ան  
կ'իմանայ և ոտքերով գետինը կը փորէ։ Այն  
ատեն զէնքերս վրան կապէ, թող տուր։  
Զին կուգայ զիս կը գտնէ։

Վաժան ալ հսկայ մարդ մըն էր։ Երբ  
պոռար՝ ձայնը աշխարհի մէկ ծայրէն միւս  
ծայրը կը լսուէր։ Ճամբուն վրայ շատ քա-  
ջերու և գեւերու պատահեցան։ Վաժանի  
պոռալէն անոնք կը վախնային ու կը վախ-  
չէն։ Տեղ տեղ ալ Ծոստոմ կը բռնէր դե-  
ւերը, իրարու զարնելով կը սպաննէր։

Պատահեցան թեւաւոր դեւի մը, որ  
աղջիկ մը ոտքերուն մէջը առած կը վախ-  
ցընէր։ Վաժան պոռաց, Ծոստոմ ապառաժ  
մը առաւ զարկաւ։ Դեւը աղջիկը ձգեց վա-

Ոկան ամոր ին պահ ու ու պահ ու ու պահ ու ու



խաւ : Աղջիկը պատմեց որ ինք թագաւորի զաւակ է : Տարին , թագաւորին յանձնեցին զինքը :

Թոստոմ՝ կերաւ , խմեց քնացաւ : Քաղթին մէջ յանկարծ ամէնքն ալ սկսան փախչի , հեռու տեղեր պահուիլ :

Սալմանը եկեր եօթը տարուան տուրք կ'ուզէր : Տուրքը տանողն ալ պիտի սպաննէր , անոր համար մարդիկ կը փախչէին :

— Տուէք ես տանիմ , բայտ վաժանի :

Թոստոմ քունին մէջ լսեց վաժանի ձայնը .

— «Հասիր , Սալման զիս տարաւ : »

Թոստոմ արթնցաւ , իմացաւ եղածը , իր ձին ահա իր քովը կայներ է : Թոստոմ թուաւ ձիուն վրան և քշեց : Հասնի բնչ տեսնէ աղէկ : Սալման վաժանը կապեր է իր բերդին մէջ : Քաջերը երբ զիրար տեսան , կոխւը սկսաւ , զէնքերը փշուեցան , ձիերը սպաննուեցան , զիրար զրկեցին և մէկմէկու մաղէն մնացին կախուած :


Մինչև այսօր ալ անոնք կը կոռուին , և իրարու չեն յաղթած :

Երբ որ Սալմանն ու Թոստոմ իրար քաշկրոտեն , ան ոնց ոյժէն երկիրը կը շարժի , երկրաշարժ կ'ըլլայ , և վաժանի ձայնը խորունկէն կը լսուի :



## 5.

### ԴԵԺԻԿՈՆ



#### I.

Դըժիկոն անուն աղքատ մարդ մը կար:  
Ունէր երկու այծ, մէկ կով։ Դըժիկոնի  
կինը չար էր. շատ նեղութիւն կուտար էր-  
կանը ու կ'ըսէր։

— Գնա հեռու երկիրներ, աշխատէ,  
Դրամ վաստըկէ. ինձի հագուստ կապուստ  
բեր, եզներ, ոչխարներ, ծիեր գնէ։

Դըժիկոն կովը առաւ, տունէն դուրս  
ինկաւ՝ կնկան ձեռքին ազատելու համար։

Ճամբան կ'երթար, երբ անօթենար կովը  
կը կթէր, կաթը կը խմէր. երբ յոզնէր, ա-  
նոր վրայ կը հեծնէր ծիու պէս։ Խեղճը զա-  
զաններու, վախէն կը դողար։

Օր մը կովը խոտոս տեղ մը կ'արածէր,  
ինքն ալ կը քնանար։ Ճանճերը խայթեցին  
զինքը. ելաւ կինը անիծեց և ձեռքը շար-  
ժելով շատ մը ճանճ բռնեց, ափին մէջ  
ճզմեց։ Տեսաւ որ եօթը ճանճ սպաննած է։

— ՀԵ , ըսաւ , ես եօթը մարդ սպան-  
նեցի :

Ելաւ կովը հեծաւ , հասաւ գիւղ մը :  
Հոս տէրվիշի մը թուղթ մը զրել տուաւ ,  
կախեց կովին ճակատէն :

Թուղթին վրայ այսպէս զրուած էր :  
«Ես Դրժիկոնն եմ , մէկ ձեռքով եօթը մարդ  
սպաննած եմ :»

2.

Դրժիկոն շատ երթալէն ետքը հասաւ  
կանաչ դաշտ մը : Դաշտին վլուխը կը տես-  
նուէր դղեակ մը : Կովը ձգեց խոտին վրայ  
պառկեցաւ , քնացաւ :

Դղեակին մէջ եօթը քաջ եղբայրներ կը  
ընակէին . մէկը վազեց տեսնելու , թէ այդ  
ո՞վ է որ մտեր է իրենց հողին մէջ առանց  
վախնալու : Եկողը տեսաւ կովի ճակատին  
վրայ զրուածը ու ինքնիրենը ըսաւ .

— Այս մարդը մէկ ձեռքով եօթը հոգի  
եթէ չըսպաննէր , կը վախնար , մեր հողին  
մէջ ոտք չէր դներ անդէն : Այս մարդը  
կտրիճ մէկն ըլլալու է :

Եղբայրը գնաց տուն և տեսածը պատմեց :  
Եօթն մէկ եկան Դրժիկոնին պատիւ ը-  
նելու և տուն տանելու : Դրժիկոն արթըն-

Հարաւած իրենց դեռևի սպառքեան վրա , վազեցիլ...



ցաւ, եօթը կտրիճները տեսնելով փախաւ հեռուն և սկսաւ դողալ վախէն :

Եղբայրները կարծեցին թէ Դըժիկոն բարկութենէն կը դողայ, պիտի յարձակի իրենց վրայ և եօթն մէկէն պիտի սպաննէ : Աղաչեցին իրեն ըսելով .

— Մենք այս դղեակին մէջ եօթն եղբայրներ ենք, կտրիճութեան մեծ անուն ունինք, քանի որ դուն մէկ ձեռքով եօթը հոգի սպաննած ես, մեր մեծ եղբայրը եղիր, տունով տեղով քեզի կը ծառայենք :

— Թող ձեր ըսածին պէս ըլլայ, ըստ Դըժիկոն և դադրեցաւ դողալէ :

Դըժիկոնը տարին տուն, սեղանին գրաւիր նստեցուցին, ամէն տեսակ կերակուրներ դրին առջեր ու իրենք ալ ոտքի վրայ անոր ծառայութիւն ըրին :

— Այս փորձանքէն ես ի՞նչպէս ազատիմ, վախնամ զիս սպաննեն, ըստ Դըժիկոն ինքնիրեն և զլուխը կախած ինկաւ մըտածմունքի մէջ :

Եօթն եղբայրներն ալ կարծեցին թէ շատ խելացի մարդ է, որ կը մտածէ և իրենց երեսն անգամ չի նայիր :

Հանգստանալէն յետոյ անոնցմէ մէկը հարցուց .

— Տէր իմ, ուր ես թողեր քու զէնքդ ,  
ձիդ , ծառաներդ : Հրաման ըրէ երթանք ,  
բերենք :

— Զէնք ու ձի վախկոտ մարդոց բան  
է , ես ի՞նչ պիտի ընեմ ատոնք . տշխարհի  
մարդիկ իմ ծառաներս են : Ես Դըժիկոնն  
եմ , մէկ ձեռքով եօթը հոգի կը սպաննեմ :  
Եօթը եղբայրները հաւատացին , բերին  
նոր հագուստներ հազցուցին ու իրենց քոյրն  
ալ անոր տալով շքեղ հարսնիք մը ըրին :

### 3.

Չորս իշխաններ այդ աղջիկը ուղեր էին,  
եղբայրները չէին տուած : Երբ լսեցին որ  
հարսնիքը արդէն եղած է , չորսն ալ զօրքով  
եկան կոիւ ընելու :

Դըժիկոն վախէն նորէն սկսաւ գողալ .  
ուղեց վախչի , բայց ո՞ւր :

Եօթը եղբայրները եկան , որ կոռւի  
տանին իրենց կտրիճ փեսան , իսկ վախէն  
փեսային ակուաները կը կափկափէին : Անոնք  
կարծեցին թէ փեսային արիւնը կ'եռայ , ել-  
լելուն պէս թշնամինները ցիրուցան պիտի  
ընէ : Ուստի ըսին .

— Տէր , մենք երթանք կոռւի , եթէ նեղը  
մնանք , քեզ կանչել կուտանք :

Դըժիկոն առւնը մնաց , եօթը եղբայրները գացին :

Անոնց անունը ելած էր իբրև քաջ . հիմա փեսայ մըն ալ ունէին , որ մէկ ձեռքով եօթը մարդ կը սպաննէր :

Թշնամիները առաջ վախցան , յետոյ ոյժ առնելով եօթը եղբայրները նեղը ձգեցին : Ասոնք մարդ , ձի , զէնք դրկեցին Դըժիկոնին , որ օգնութեան համնի :

— Երթամ , զիս ձգեմ սուրերութերանը ապատիմ , ըստ ինքնիրեն ու հեծաւ ձին :

Զին հասկցաւ որ հեծնողը խակ , անվարժ մէկն է , զլուխը առաւ՝ վախաւ : Տեսնողները կարծեցին թէ Դըժիկոն քաջութենէն կը վազցնէ ձին , որ թշնամիներուն շուտ համնի , կոտորէ : Այս որ տեսան թշնամիները վախէն իրար կոխոտելով ջարդուեցան :

Դըժիկոնի սիրտը ինկաւ գողը , ձին վազած ատեն ծառի մը մօտէն անցաւ , պլուեցաւ ծառին , մնաց կախուած : Զին տակէն վախաւ : Դուն մի ըսեր ծառը փուտ է եղեր , արմատէն կոտրեցաւ վար ինկաւ :

Այս որ տեսան թշնամիները կարծեցին , թէ Դըժիկոն ծառը պիտի առնէ և զիրենք ծեծելով սպաննէ : Բոլորն ալ վախան զիրար կոխուտելով :


Եօթը եղբայրները զարմացան իրենց  
փեսային քաջութեան վրայ , վազեցին ,  
դրկեցին զինքը և մեծ վառքով տարին տուն :  
Չորս իշխանները խորհուրդ ըրին , և  
շատ թանկապին նուէրներ բերին Դըժիկո-  
նին , որ անոր հետ հաշտուին :

---



## 1.

### ԿԱՏՈՒՆ ԵՒ ՇՈՒՆԸ



#### I.

Ժամանակով կատուն դերձակութիւն  
կ'ընէր : Շունը գառնուկի մը մորթ բերաւ  
անոր ու ըստ .

— Բարեւ քեզի , վարպետ վիսօ , առ  
այս մորթը ու ինծի զլիսարկ մը շինէ . ձմեռ  
է , զլուխս կը մսի : Վարձքդ ինչ որ է կու-  
տամ , միայն թէ շուտ ըլլայ :  
կատուն պատասխանեց .

— Աչքիս վրայ , Քուչի աղբար . Ի՞նչ մեծ  
բան է մէկ զլիսարկը : Կը կարեմ : Ուրբաթ  
օր եկուր և առ : Խսկ վարձքի համար մեր  
մէջ խօսիլին ալ ամօթ է :

2.

Ուրբաթ օր շունը կանուխ , կատուն  
դեռ խանութը չը բացած , կանգնած էր ա-  
նոր դուանը առջև : Կատուն այս տեսնալուն  
պէս քիթին տակէն մըրթմըրթաց , բարկա-  
ցաւ ու պուաց :

— Առտուն կանուխի ի՞նչ դուխս կը ցաւ-  
ցընես : Ի՞նչ եղար , ցուրտը քեզ տարածւ :  
Դեռ լմնցած չէ :

— Այդպէս ըսէ , ալ ի՞նչու կը բարկա-  
նաս : Քեզի դրամ եմ տուեր , որ գլխարկս  
կարես . եթէ լմնցած չես , ըսէ վաղը գամ :

Այսպէս խօսեցաւ Քուչի աղբարը , բար-  
կացաւ ու գնաց :

3.

Ուրիշ անգամ մըն ալ եկաւ շունը ,  
կատուն նորէն անոր գլխարկը կարած չէր :  
Այս անգամ երկուքին մէջ կոփւը սկսաւ :

— Գող Փիսօ , մորթը տուր , պէտք չէ  
քու կարածդ ալ , կարելիքդ ալ :

— Անպիտան շուն , դուն ինձի ի՞նչ  
տուիր , որ հիմա եկեր ետ կուզես : Ես  
քեզմէ բան մը չեմ առած , գնա բանդ :

Շունը գնաց դատաւորին գանգատե-  
ցաւ : Կատուն վիախաւ ու ալ չերեւաց :

Այն օրէն այս օր, երբ շունն ու կատուն  
զիրար տեսնեն, իրարու վրայ կը վազեն,  
կը մըրթմըրթան ու բարկացած կը բաժնուին  
իրարմէ :

---

## 2.

### ՅԱՅԼՆ ՈՒ ԱՂՈՒԵՍԸ

---

#### I.

Գայլը և աղուէսը մէկտեղ կ'ապրէին :  
Գայլը ուժով էր, ուստի աղուէսը կը կա-  
տարէր անոր բոլոր հրամանները : Անգամ  
մը անտառին մէջ գայլը ըսաւ .

— Աղուէս աղբար, քիչ մը ուտելիք  
դտիր, եթէ ոչ քեզ կ'ուտեմ :

— Ես գիւղացիի մը տուն գիտեմ, հոն  
երկու գառնուկներ կան, եթէ կ'ուզես, եր-  
թանք մէկը բերենք, պատասխանեց աղուէսը :

Գայլը ուրախ գուարթ ճամբայ ելաւ  
աղուէսին հետ : Աղուէսը գառնուկներէն  
մէկը բերաւ, տուաւ գայլին, ինքը փախաւ  
զնաց :

2.

Գայլը գառնուկը կերաւ, չկշտացաւ։  
Գնաց որ միւս գառնուկն ալ բերէ։ Բայց  
այնքան անշնորհք էր. որ աղմուկ հանեց,  
գառնուկին մայրը արթնցաւ ու սկսաւ բարձր  
ձայնով մէ մէ մէ պոռալ։

Զայնը լսեցին գիւղացիները, վազեցին  
եկան և գայլը այնպէս մը ծեծեցին, որ մէկ  
ոտքը կաղ եկաւ աղուէոը գտաւ ու ըսաւ.

— Դուն պատճառ եղար։ Ես ուզեցի  
միւս գառնուկն ալ ուտել, բայց գիւղացի-  
ները վրաս թափեցան, այնքան ծեծեցին  
որ մէկ ոտքս կաղ մնաց։

— Հապա քեզ նվ ըսաւ որ այդպէս ա-  
գահ ըլլաս, պատասխանեց աղուէոը։

3.

Օր մը նորէն մէկտեղ դաշտ գացին։  
Գայլը ըսաւ.

— Աղուէս աղբար, քիչ մը ուտելիք  
գտիր, եթէ ոչ քեզ կ'ուտեմ։

— Ես գիւղացիի մը տուն գիտեմ, տան-  
տիկինը այսօր քաթա կ'եփէ։ Երթանք գող-  
նանք, պատասխանեց աղուէոը։

Երկուքը մէկ գացին : Աղուէսը մտաւ  
ներս . վնառուց , վնառեց քաթաները գտաւ ,  
վեց հատ առաւ , բերաւ գայլին ու ինքը  
փախաւ գնաց :

4.

Քաթան համով եկաւ գայլին :

Ուզեց ինք ալ մտնել ու նորէն գողնալ :  
Բայց անշնորհք էր , ամանը քաշելուն պէս  
ինկաւ , կտոր կտոր եղաւ մեծ աղմուկ հա-  
նելով : Աղմուկէն գիւղացիները արթնցան ,  
եկան գայլը այնպէս ծեծեցին , որ այս ան-  
գամ երկու ոտքը կաղ եկաւ աղուէսը գտաւ  
ու ըստաւ .

— Դուն պատճառ եղար : Ես ուզեցի  
միւս քաթաներն ալ ուտել , գիւղացիները  
վրաս հասան այնքան ծեծեցին զիս , որ ահա  
երկու ոտքով կաղ եկայ քովդ .

— Հապա քեզ ո՞վ ըստաւ որ այդքան ա-  
գամ ըլլաս , պատասխանեց աղուէսը :

5.

Երրորդ անգամ գայլը նորէն ըստաւ .

— Աղուէս աղբար , քիչ մը ուտելիք  
գտիր , եթէ ոչ քեզ կ'ուտեմ :

— Ես գիւղացիի մը տուն գիտեմ, այսօր  
հոն կով մը մորթեցին : Միսը մառանին  
մէջ է : Երթանք ուտենք, պատասխանեց  
աղուէսը :

— Շատ աղէկ, երթանք, ըստ գայլը,  
բայց եթէ ես չկրնամ քալել, զիս պիտի  
շալկես :

Աղուէսը գայլին ումերը մտնելով տա-  
րաւ գիւղացիին մառանը :

## 6.

Գայլը ինկաւ միսին վրայ և սկսաւ ու-  
տել առանց չորս կողմը նայելու :

Աղուէսն ալ կերաւ, բայց միշտ կը փա-  
զէր, կը մանէր իրենց եկած ծակը աչքէ  
կ'անցընէր. հապա եթէ ուռէր և ետքը չկա-  
րողանար դուրս ելլել :

Գայլը գարմացաւ և հարցուց .

— Աղուէս աղբար, ի՞նչու ծակէն դուրս  
կ'ելլես, ներս կը մտնես :

Խորամանկ աղուէսը պատասխանեց .

— Տեսնեմ թէ մարդ կուգայ :

Գիւղացին մառանին մէջ ձայն մը լսեց.  
հաստ լախտ մը առաւ, իջաւ վար : Աղուէսը  
թողածին պէս փախաւ, բայց գայլը այնքան  
շատ կերած էր, որ փորը ուռած էր, մնաց



Գիւղացին հասաւ եւ լախտով զրուխը ջախջախելով զայլը սպանելեց:

ծակին մէջը : Գիւղացին հասաւ և լախտով  
պուխը ջախջախելով գայլը սպաննեց : Աղ-  
ուէսը հասաւ անտառ և ուրախութենէն չէր  
գիտեր ինչ ընելը :  
Ազահ ընկերէ մը ազատած էր այլ հա:



### 3.

## ԱՆՏԱՌԻ ՄԱՆՈՒԿԸ



### 1.

Անտառին մէջ ճօճ<sup>1</sup> մը կար, անոր մէջը  
պպախկ տղայ մը : Տղան կուլար, մայր չկար  
որ ծիծ տար, հայր չկար որ պահպանէր :

Գթուտ պախրակով<sup>2</sup> մը՝ կաթնալից կըրծ-  
քով՝ իր հորթուկին հետ եկաւ ճօճին մօտ  
և տխուր ձայնով մը մանուկին ըսաւ .  
Սիրուն երախայ, որբ ես մնացեր,  
Քու անբաղդ մօրը գերի են տարեր,

(1) Ծառերու մէջտեղը կտպուած օրօրոց մը :

(2) Եղջերու, վայրի այծի անսակ մը .

Նա գնաց , կորաւ , ալ ետ չպիտի դառնայ ,  
Ալ ոչ մէկ անգամ քեզ կաթ չպիտի տայ ,  
Նա քեզ փաթաթեց լայն տերեւներով ,  
Ճօճի մէջ կապեց , «Նանիկ» ըսելով ,  
Նա լաց եղաւ աղի արցունքով  
Վերջին նանիկն խօսեցաւ լալով ,  
«Նանա , պղտիկս , նանա ,  
«Մեծատերեւ թաթաշնր<sup>1</sup> ,  
«Մանրատերեւ ոտաշոր .  
«Քամին կ'ուզայ՝ ժաժ կուտայ ,  
«Պախրէն կուզայ ծիծ կուտայ ,  
«Նանա , գառնուկս , նանա» ...

Ահա եկեր եմ , որ քեզ ծիծ տամ ես ,  
Պահեմ , պահպանեմ իմ հորթուկիս պէս .

## 2.

Պախրան ծիծ տուաւ մանկիկին : Ան  
կշտացաւ ու քնացաւ : Պախրան իր հորթու-  
կը ձգեց մանկիկին քով , իսկ ինքը գնաց ա-  
րածելու , որ կաթը շատցնէ , գայ երկուքին  
ալ ծիծ տայ : Հորթը մնաց մանկիկին քով ,  
օրօր ըսաւ անոր , որ քնանայ .

«Նանա , մանկիկ նանա ,  
իմ մայրը , քու մօրը նման չէ

---

(1) Թաթ , ձեռք , ձեռնաշոր :

Ամէն խոտէն չի կրծէ  
Ամէն ջրէն չի խրմէ  
Ամէն տափին չի նստի,  
Նա սարէսար ման կուգայ,  
Որբ կը գտնէ ծիծ կուտայ,  
Նանա , մանկիկ , նանա ...

Պախրան կուրծքը լեցուն ետ դարձաւ  
արօտէն , երկուքին ալ ծիծ տուաւ , կշտա-  
ցուց :

Մանկիկը շուտով մեծցաւ , ոտքի ելաւ .  
ամէն անզամ որ պախրան գար , անոր ե-  
տեւէն կը վազվուտէր :


### 3.

Թագաւոր մը զաւակ չունէր : Երազ տե-  
սաւ , որ անտառէն զաւակ մը պիտի գանէ :

Որպի ելաւ : Երբ հասաւ անտառի խորը ,  
հոն տեսաւ պախրայի մը ոտքի հետքերը ,  
ասոնց քով մանկիկի մը ոտքի նշաններ :

Թագաւորը վինտուեց և ծիծ կերած ժա-  
մանակ գտաւ մանկիկը : Շատ ուրախացաւ .  
պախրան , հորթուկը ու մանուկը տարաւ իր  
պալատը :

Մանուկը մեծցաւ , թագաւորին տեղ  
անցաւ և գնաց մայրը զերութենէ ազատեց :



1. 1/2 4.

ԻՆՉ ՑԱՆԵՍ, ԱՅՆ ԿԸ ՀՆՁԵՍ

---

1.

Չար հարս մը կար . ունէր կեսուր մը :

Օր մը կեսուրը հիւանդացաւ , սիրտը  
խորոված միս ուզեց : Կանչեց հարսը և ըստաւ .

— Աղջիկս , հոգիս խորոված կ'ուզէ ,  
զնա կտոր մը միս առ , խորովէ բեր ուտեմ :

Հարսը գուրս ելաւ , առուէն քանի մը  
գորտ բռնեց , շամփուրը անցուց , կրակին  
վրայ խորովեց և հացին վրայ քաշելով ,  
բերաւ դրաւ կեսուրին առջեւը : Կեսուրը  
տեսաւ որ գորտ է , անիծեց հարսը ըսելով .

— Որդի , գուն ինձի գորտ բերիր , Աս-  
տուծմէ գտնես փոխարէնը :

Այս ըստաւ ու մեռաւ :

2.

Ժամանակ անցաւ , այս չար կինը տղան  
կարգեց և տունը հարս մը բերաւ : Այս  
հարսը բարի էր գառնուկի նման :

Օր մը կեսուրը հիւանդացաւ : Հարսը  
անոր չորս կողմը կը պատէր և ուզածը կու-  
տար անոր : Հիւանդին սիրտը խորոված ու-  
զեց , կանչեց հարսին ըսաւ .

— Աղջիկս , սիրտս խորոված կ'ուզէ ,  
գնա կտոր մը միս առ , բեր ուտեմ :

Աչքիս վրան , ըսաւ հարսը , վազեց շու-  
կայ , ոչխարի միս առաւ , բերաւ շամփուրը  
անցուց ու կախեց թոնիրը , որ եփի :

Հանէ ի՞նչ տեսնէ աղէկ , միսը գորտ է  
դարձեր : Շամփուրը ձեռքը մնաց զարմացած :

Այդ խորովածը նետեց դուրս , նորէն  
միս բերաւ , նորէն թոնիրը դրաւ , հանեց  
տեսաւ որ կրկին գորտ է դարձեր :

Կեսուրը անդիէն պոռաց .

— Աղջիկ , չեփեցա՞ւ , շնուռ ըրէ :

— Հարսը գնաց և պատմեց եղածը : Կե-  
սուրը հասկցաւ ու ըսաւ :

— Գնա , բեր , գնա բեր , այդ իմ ըրա-  
ծիս փոխարէնն է :

Մարդ ինչ ցանէ , այն կը հնձէ:



## 5.

### ԵՕԹԸ ԳԱՒԱԶԱՆՆԵՐԸ

#### 1.

Գիւղացի մը եօթը որդիներ ունէր :

Աստիք միշտ իրարու հետ կը կռուէին ու  
աշխատանքի չէին երթար , բանէ գործէ ետ  
կը մնային :

Օր մը հայրը կանչեց որդիները , անոնց  
առջև դրաւ չուանով մը իրարու կապուած  
եօթը գաւազաններ և ըստ .

— Ով որ այս կապոցը կտրէ , անոք հա-  
րիւր ոսկի դրամ պիտի տամ :

#### 2.

Որդիները իրարու ետեւէ փորձեցին ,  
բայց ոչ մէկը կրցաւ կապոցը կտրել : Ամենքն  
ալ ըսին :

— Զի կոտրիր , անկարելի բան է :

— Ատկէ դիւրին բան չկայ , ըստ հայ-  
ըր , կապոցէն գաւազանները մէկ մէկ հա-

Որդիները իրաւու կտրել յ խռնիքի բայց ու միշտ պահպանի կտրել:



նեց, իրարու ետեւէ կոտրեց և նետեց մէջ-  
տեղը :

— Հա, գոչեցին տղաները, ատանկ զատ  
զատ մենք ալ կրնանք կոտրել :

— Դուք ալ ճիշտ այս գաւազաններուն  
պէս էք, որդիներս, պատասխանեց հայրը :  
Քանի միաբան ըլլաք, ձեզի մէկը բան մը  
չկրնար ընել, բայց երբ անմիութիւնը մտնէ  
ձեր մէջ, այս գաւազաններուն պէս կտոր  
կտոր կ'ըլլաք և մարդոց ոտքին տակը կ'եր-  
թաք : Միութիւնը ոյժ է :

Որդիները ամչցան և լսեցին իրենց հօր  
խրատը :



## 6.

54  
ՓԱԽԱՏԱԿԱՆ ԵՐԳԻՉՆԵՐԸ



1.

Մարդ մը էշ մը ունէր :  
իրեն շատ ծառայած էր, բայց այլեւս  
ոյժէ ինկած : Ծերութեան պատճառաւ տ-  
ռաջուան պէս բեռ չէր կրնար տանիլ :

Սաոր համար տէրն իրեն շատ խոտ չէր  
տար և կը մտածէր մորթել :

Էշը հասկցաւ զիսուն գալիքը, փախաւ  
ու ճամբայ ելաւ քաղաք երթալու :

— Հոն երթամ երգիչ դառնամ, բատ  
ինքն իրեն :

2.

Էշը երբ քիչ մը հեռացաւ, ճամբուն  
վրայ որսի շուն մը տեսաւ :

Շունը բերանը կը բանար կը խփէր,  
շունչ չէր կրնար առնել :

— Շուն աղբար, ի՞նչու շունչդ կտրուեր  
է, ի՞նչ ես եղեր, հարցուց էշը :

— Ախ , ես ծերտցայ , որսի չեմ կրնար  
երթալ , տէրս ուզեց սպաննել զիս , ես ալ  
փախայ եկայ հոս , չգիտեմ ի՞նչպէս ուտելու  
հաց պիտի գտնեմ , գանգատեցաւ շունը :

— Ես քաղաք կ'երթամ ու հոն երգիչ  
պիտի դառնամ : Մէկտեղ երթանք , դուն ալ  
թմբուկ կը զարնես , ըստւ էջը :

Շունը համոզուեցաւ և միացաւ իշուն :

### 3.

Էշն ու շունը ճամբան կատու մը տեսան , երեսը թթուած նստած :

— Ի՞նչ կ'ընես ; կատու աղբար , հարցուց էջը :

— Ի՞նչ ընեմ , ակոաներս թափեր են ,  
ծերութեանս պատճառաւ մուկ չեմ կրնար  
բռնել : Տանտիկինս խորհուրդ ըրաւ , որ զիս  
խեղդէ : Զգեցի փախայ , հիմա չգիտեմ , ով  
ինձի ուտելու հաց պիտի տայ :

Էջը և շունը ըսին .

— Մէնք քաղաք կ'երթանք երգիչ դառնալու , դուն ալ մեղ հետ եկուր :

Կատուն համոզուեցաւ և միացաւ մեր  
երգիչներուն :

4.

Փախստականները պարտէզի մը առջեւ-  
լէն անցած ատեն տեսան աքլոր մը, որ բո-  
լոր ոյժով կը պոռար :

— Եշը հարցուց .

— Քու պոռալուտ ես չհաւնեցայ, ի՞նչ  
ցաւ ունիս, աքլոր աղբարդ :

— Ի՞նչ պիտի ունենամ, վազը կիրակի  
է, մեր տունը հիւրեր պիտի գան : Տանտի-  
կինս պատուիրեց ծառային որ իրիկունը  
պուխս կտրէ և կերակուրին մէջ դնէ : Ահա  
թէ ի՞նչու ցաւագարի պէս կը պոռամ :

— Օ՛, հոգ մի ըներ, ըստ էշը : Եկուր  
մեզ հետ քաղաք երթանք, երգիչ դառնանք:  
Դուն անուշ ձայն ունիս, ի՞նչու պիտի  
սպաննուխս : Մենք այնտեղ մեր, փորը կը շ-  
տացնելու չափ հաց կը գտնենք :

Աքլորը համոզուեցաւ և միացաւ իրենց :

5.

Մէկ օրէն քաղաք չկրցան հասնիլ :

Առաջին գիշերը ուզեցին անտառի մը  
մէջ անցնել : Եշը և շունը մեծ ծառի մը  
տակ պառկեցան, կատուն ճիւղի մը վրայ  
ելաւ, աքլորը թառեցաւ ծառին գագաթը :

Դեռ աչքը չէր փակած, հեռուն լոյս մը  
տեսաւ ու ըսաւ իր ընկերներուն .

—Մօտերը տուն մը ըլլալու է, լոյս մը  
մը կը տեսնեմ:

—Ուրեմն այդ տունը երթանք, հոն ա-  
ւելի հանգիստ կ'ըլլանք, ըսաւ էշը:

Ամենը մէկ ճամբայ ելան: Լոյսը եր-  
թալով մեծցաւ: Մեր երգիչները հասան ա-  
ւազակներու այրի մը առջեւ: Էշը պատու-  
հանէն ներս նայեցաւ:

—Ի՞նչ կը տեսնես, էշ աղբար, հարցուց  
աքլորը .

—Սեղան մը կը տեսնեմ, վրան լեցուն  
ուտելիք, խմելիք: Աւազակներ նստած են  
շուրջը, կ'ուտեն կը խմեն: Մի, անգամ  
մը մենք ներս մտնէինք :

## 6.

Խորհուրդ ըրին կենդանիները, որ կեր-  
պով մը ներս մտնէն:

Էշը ոտքերը տնկեց և պատուհանին առ-  
ջեւը կայնեցաւ: Շունը ելաւ իշուն կոնակը,  
կատուն ելաւ շանը վրան, աքաղաղը թուա-  
կայնեցաւ կատուին գլխուն վրայ:

Ամէնը մէկ սկսան երգել — էշը զոաց,  
շունը հաչեց, կատուն մլաւեց, աքլորը խօ-  
սեցաւ:

Աղոթական զայտական իշխանությունները և պատմական առաջնահանդիսական գործությունները:



Վերջը ամէնը մէկ թափեցան պատուհանէն ներս ապակիները ջարդ ու փշուր ընելով :

Աղմուկէն վախնալով աւագակները դուրս թափեցան ու վախան անտառին մէջ : Կարծեցին թէ զեւեր մտած են իրենց այրը : Կենդանիները նստեցան սեղան և լաւ մը կերան , կշտացան :

Վերջը լոյսը մարեցին որ պառկին : Էշը պառկեցաւ աղբանոցին վրայ , շունը դրանը առջեւ , կատուն տաք մոխիրին մէջ , աքլորը թռաւ հեծանին վրայ : Բոլորն ալ յոգնած էին , և անմիջապէս քնացան :

7.

Կէս զիշերին աւագակները տեսան որ լոյսը մարած է և ձայն ձուն չկայ : Աւագակապետը մարդ մը դրկեց , որ տեսնէ թէ ի՞նչ կայ այրին մէջ :

Եկողը տեսաւ որ ձայն ձուն չկայ , գրնաց խոհանոցը լոյսը վառելու : Մոխիրին վրայ տեսաւ կատուին աչքերը և կարծեց թէ կրակ է : Մօտեցուց լուցկին որ վառէ : Կատուն անմիջապէս ցատկեց անոր երեսին ու ճանկուտեց իր սուր եղունգներով : Աւագակը վախէն վախաւ դէպի դուռը : Հոսկոխեց շանը վրայ : Շունը վեր ցատկեց և

խածաւ անոր սրունքը։ Աւազակը իերբ դէպի  
աղբանոցը վազեց, կոփեց իշուն վրայ, է-  
շէն ալ կերտաւ ուժով աքացի մը։ Աքլորը  
աղմուկէն արթնցաւ և հեծանի վրայէն պո-  
ռաց. «Կու-կու-լիկ-կու»։

8.

Աւազակը վազելով հասաւ իր գլխաւո-  
րին քով և պատմեց.

— Մեր այրին մէջ բոյն դրած է վիշապ  
մը, որ իր սուր եղունգներով երեսս ճան-  
կուտեց։ Դրանը առջեւ աներեւոյթ մարդ մը  
պառկած է, ձեռքը դանակ մը։ Տես, սրուն-  
քիս վէրքը այդ դանակով բացաւ։ Աղբանո-  
ցին վրայ սեւ հրէշ մը պառկած է։ Անիկա  
ինծի զարկաւ հաստ լախտով մը։ Վերը՝  
կտուրին վրայ նատած է դատաւորը որ պո-  
ռաց. «բոնեցէք աւազակը»։ Ես ինչպէս  
փախչիլս չգիտցայ, անգամ մըն ալ հոն չեմ  
երթար։

Աւազակները այս դէպքէն ետքը այլևս  
իրենց այրը ոտք չկոխեցին, իսկ մեր եր-  
գիչները մնացին հոն։





# 1.

## Յ Շ Յ Ռ Ո Վ Ա Ր Ջ Ի Կ

### 1.

Մայր մը կոտղայ մը կային։ Իրենց  
տունը ծովին մօտ էր։ Մայրը ամէն առ-  
տու հաց մը կը նետէր ծովուն մէջ։ Մօրը  
մեռնելէն ետքը տղան կը նետէր։

Օր մը տղան շուկայ գնաց, իրիկունը  
դառնալով տեսաւ, որ տունը աւլուած,  
մաքրուած է։ Մնաց զարմացած։

Օր մըն ալ միս առաւ ձգեց տունը. ի-  
րիկունը եկաւ, տեսաւ՝ եփուած կրակի  
վրայ պրուած է։

Տղան գաղտնիքը իմանալու համար օր  
մը սանդուխին տակը պահուըտեցաւ։ Քիչ  
մը ետքը ինչ տեսնէ աղէկ, — մեծ ձուկ մը  
ծովէն ելաւ և տունը ինկաւ։ Զուկը շա-  
պիկը վրայէն հանեց, և աննման աղջիկ մը  
դարձաւ։ Աղջիկը տունը աւեց, եկաւ որ

սանդուխին տակն ալ աւելէ։ Տղան յանկարծ  
ձեռքէն բռնեց։ Աղջիկը պոռաց.

«Մամա, մամա,»

Մայրիկը ծովէն ձայն տուաւ.

—Աղջիկս, մի վախնար, անիկա մեր  
փեսան է։

Հարսնիք ըրին, ծովու աղջիկը տուին  
այս տղուն։

2.

Օր մը նոր հարսը կարկանին առջեւ  
նստած թաշկինակ մը կը նախշէր։ Թագաւ-  
որր հեռուէն տեսաւ զայն, սիրոր սիրեց,  
ուզեց փեսան սպաննել և հարսը ինք առ-  
նել։

Տղան կանչեց ու ըստ.

—Քեզմէ այն տեսակ վրան մը կ'ուզեմ,  
որ բոլոր զօրքս մէջը առնէ և կէմն ալ պա-  
րապ մնայ։ Երեք օրէն եթէ չբերես, վիզդ  
կտրել կուտամ։

Փեսան տուն եկաւ, եղածը հարսին  
պատմեց։ Աղջիկը ըստ.

—Հոգ մի ըներ, մայրիկիս կ'ըսեմ, մեր  
պղտիկ վրանը կը բերէ։

Ծովուն մէջէն մայրիկը դուրս տուաւ  
իրենց պղտիկ վրանը։ Տղան տարաւ, թա-

գաւորը եօթն օր, եօթն զիշեր բանալ  
տուաւ, կէսը նորն ծալլուած մնաց:

Այս որ տեսաւ, թագաւորը ըսաւ.

—Քեզմէ այն տեսակ գորդ մը կ'ուզեմ,  
որ այս վրանին տակ փռեմ, կէսն ալ ծալ-  
լուած մնաց:

Մայրը տուաւ ծովէն այն տեսակ գորդ  
մը: Թագաւորը այս անգամ ըսաւ.

—Քեզմէ ողկոյզ մը խաղող կ'ուզեմ, որ  
զօրքս ուտէ և չհատնի:

Տղան այս ալ ծովէն առաւ, տարաւ:  
Թագաւորը ըսաւ:

—Քեզմէ կ'ուզեմ երեք օրուան նորա-  
ծին մանուկ մը, որ ինծի պէս խօսի, երթայ  
գայ: Այս լուրը առնելուն հարսը գնաց ծո-  
վուն բերանը և պոռաց

—Մայրիկ, մայրիկ, պղտիկ եղբայրս  
տուր, քիչ մը սիրեմ:

Փեսան առաւ տղան, որ թագաւորին  
տանի: Ճամբան տղուն ոտքը սահեցաւ:

Պղտիկ տղան ըսաւ.

—Փեսայ, փեսայ, կոյր ես, կամաց  
քալէ, քիչ մնաց պիտի իյնայի:

Փեսան սկսաւ ծիծաղիլ:

Թագաւորը տեսնելուն պէս, պղտիկը

Թիվ 1 Առաջնահանձնություն ու բարեկամություն



վաղեց անոր քով ու երեսին ապտակ մը  
իջեցուց :

—Թագաւոր, թագաւոր, ըստ, դուն  
չե՞ս ամչնար, կ'ուզես մեր փեսան սպան-  
նել, քուրիկս առնել :

Թագաւորը ամչցաւ ու զղչաց իր ը-  
րածին :



## 2.

3

### ԻՄԱՍՏՈՒՆ ԶՈՒԼՀԱԿԸ



1.

Թագաւոր մը իր գահին վրայ նստած էր . հեռու երկրէ մը դեսպան եկաւ իրեն մօտ , և առանց խօսելու թագաւորին գահի շուրջը կոր զիծ մը քաշեց , բերանը գոցեց ու նստաւ :

Թագաւորը և իր իշխանները բան մը չհասկցան : Մեծ ամօթ էր իրենց : Թագաւորը խիստ հրաման ըրաւ , որ իմաստուն մարդ մը գտնեն : Ծառաները փնտուած ատեն , տունէ մը ներս մտան , տեսան որ տղան օրօրոցի մէջ կ'օրօրուի , բայց տունը մարդ չկայ : Երան տանիք , տեսան որ ցորեն լուացած ու փռած է , եղէզ մը կայ տնկուած , որ կ'երերայ , ճնճղուկները կը թողնէ : Քովը նորէն մարդ չկար : Կը զարմանան , կ'իջնան տակի տունը , կը տեսնեն որ ջուրհակ մը կտաւ կը գործէ , թել մը կապած է մաքոքի մէկ ծայրը , թել մըն ալ մէկալ ծայրը , թել

մըն ալ սահտրին կապած . կտաւը գործելու  
հետ՝ թելերը կը շարժին օրորոցը ու եղէզր  
կ'երերցնեն :


2.

Թագաւորի իշխանները կը տեսնեն որ  
ջուլհակը իմաստուն մէկն է . անոր կը պատ-  
մեն դեսպանի ըրածը : Ջուլհակը քիչ կը  
մտածէ , ետքը կ'առնէ երկու վէգ , մէկ  
վառեակ ու կուգայ , կը հանէ վէգերը կը  
ձգէ դեսպանին առջև : Դեսպանը զրպանէն  
ճանկ մը կորեկ կը հանէ , կը ցանէ գետնի  
վրայ : Ջուլհակը կը ձգէ վառեակը , որ կ'ուտէ  
կորեկը : Դեսպանը ասոր վրայ կը թողու  
կ'ելթայ :

3.

Ջուլհակին հարցուցին , թէ ի՞նչ էր այդ:  
Անիկա պատասխանեց .

— Դեսպանը եկեր էր ըսելու , թէ իր  
թագաւորը մեզի դէմ պատերազմի կուգայ ,  
պիտի հնազանդուի՞նք , թէ պիտի կոռւինք :  
Ես վէգերը նետեցի առջև , ըսել ուզելով թէ  
դուք տղայ էք , դացէք վէգ խաղացէք : Կո-  
րեկը ցանելով ուզեց ըսել , թէ շատ են ի-



Կաղացի քազառ, որ ջմուճաս թէ յու հայաւասներկդ  
աւելի խեղացի մարդ կը գտնուի աշխատաւուներուն մեղ:

ըենց զօրքերը. վառեկին կերցնելով կորեկը՝  
հասկցուցի իրեն, որ մեզմէ մէկը, իրենց հա-  
զարը կ'ուտէ :

4.

Թագաւորը ուզեց ջուլհակը նախարար  
ընել, բայց անիկա չընդունեց, խնդրեց որ  
ինք արհեստաւոր մնայ, ու ըստ :

— Կ'աղաչեմ թագաւոր, որ չմոռնաս  
թէ քու նախարարներէդ աւելի խելացի մարդ  
կը գտնուի աշխատաւորներուն մէջը, ջուլ-  
հակն ալ, կօշկակարն ալ, հողագործն ալ  
մարդու տեղ դի՞ր ասկէ ետքը :



## 6.

Յ Յ ՃՆՃՂՈՒԿ ԵՒ ԵՐԿՈՒ ՈՐԲ



1.

Մանուկը հինգ տարեկան էր, քոյրը Մանիշակը վեց տարեկան . իրենց մայրը մեռաւ : Խորդ մայր մը եկաւ տունը , որ ունէր չորս տարեկան տղայ մը : Խորդ մայրը Մանուկն ու Մանուշակը չէր սիրեր , անոնց զրկողութիւն կ'ընէր , խաշած հատիկով կ'ապրեցնէր , եղած չեղածը իր տղուն կը կերցնէր : Որբերու հայրը Մանասէ բարի մարդ մըն էր , շատ կը սիրէր իր զաւակները : Կինը մտածեց Մանասէն հեռացնել տունէն , և որբերը կորսնցնել : Սերմացու ցորենը կինը կը բըռնէր կը խաշէր : Մանասէն կը տանէր՝ կը ցանէր , բայց ցորենը չէր բուսներ : Ցորեն գընելով անիկա պարտքի տակ ինկաւ , ելաւ պանդխտութեան գնաց :

2.

Օր մը խորդ մայրը մտածեց որբերը  
գետը լուանալու տանիլ և ջրին մէջ խեղ-  
դել : Այդ օրը քոյր եղբայր խաշած հատիկ  
կ'ուտէին , տեսան որ ճնճղուկ մը ճլւրյա-  
լով իրենց բան մը կ'ըսէ : Մանուկը ուզեց  
քարով զարնել , մանուշակը չը թողուց : Ա-  
կանջ դրին որ անիկա կ'ըսէ :

— Որբեր , ինծի հատիկ մը տուէք , տա-  
նիմ ձագերուս , ձեզի բարի խրատ մը տամք  
Քոյր , եղբայր հատիկ ցանեցին անոր  
առջեւ , ան ալ ըսաւ .

— Որբեր՝ փախէք , որբեր՝ փախէք , ձեր  
խորդ մայրը այսօր ձեզ լուանալու պիտի  
տանի գետ ու ջրին մէջ պիտի խեղդէ :

Ճնճղուկին ըսածին պէս խորդ մայրը  
եկաւ , որ որբերը տանի գետը լուանալու :

— Դուն զնա , մենք կ'ուզանք , ըսին որ-  
բերը ու փախան լեռ :

Լեռան վրայ որբերը իրարու փաթթուե-  
ցան , պառկեցան :

Արեւծագին ճնճղուկը եկաւ ու ըսաւ :

— Բարի որբեր , բարի որբեր , եկէք ձեզ  
հատիկի տեղ մը ցուցնեմք :

Որբերը ուրախութեամբ վաղեցին ճնճ-

այս պատճենը ուղիսնելի է պարզ պահպան կամ ցույց տալու համար.



զուկի ետեւէն, և տեսան որ պառաւ մամիկ մը պտուկով խաշած հատիկ բերաւ, լեցուց ծառին տակ ու գնաց : Փոքրիկ թռչունները ժողվեցան ուտելու : Որբերն ալ անոնց հետ կերան : Ամէն օր մամիկը հատիկ կը բերէր և մեր որբերը թռչուններուն հետ մէկտեղ կ'ուտէին :

3.

Օր մը թագաւորի տղան որսի գացած ատեն զտաւ մեր որբերը, ըրաւ իրեն հոգեզաւակ և բնակեցուց իր պալատին մէջ : Բոլորն ալ կը սիրէին Մանուկին ու Մանուշակը, բայց որբերը տիսուր էին :

Թագաւորի տղան պատճառը հարցուց որբերուն :

Մանուշակը ըստաւ .

— Մէնք կարօտը կը քաշենք մեր հօրը, որ պանդխտութեան մէջ է, կարօտը կը քաշենք մեր սիրելի ճնճղուկին, որ մեր կեանքը ազատեց :

Թագաւորի տղան մարդ հանեց, բերել տուաւ որբերուն հայրը : Մանասէն պատժեց իր խորդ կինը, եկաւ համբուրեց իր խեղճ ու բարի որբերը :

Ճնճղուկն ալ ինքն եկաւ, պատուհանէն ներս մտաւ ու կանչեց.

— Բարի որբեր, դուք իմ ձագուկներուս հատիկ տուիք, Աստուած ալ ձեզի տուաւ: Մնաք բարով, ըստ ու թըռ...  
թուաւ գնաց:



4.

2, 5

~~Ա.ԱՏԱՎԻՇ.Տ ՏՈՒՐԴԻՆ ԿՈՒՏԱՅ~~

Եղիշ Օվհերտս

I.

Մանուկ և Եղիա երկու ընկերներ էին  
և հեռու երկիր կ'երթային աշխատանք  
գտնելու համար։ Մանուկի հացը մէկտեղ  
կերան մինչեւ հատաւ։ Վերջը Եղիան իր  
հացէն չտուաւ ընկերոջը։ Մանուկ շատ  
աղաչեց։

—Ծօ իմ հացին տեղն ալ թող չ'ըլլայ,  
փոխ տուր կամ ոզորմութիւն ըրէ, ես ա-  
նօթութենէ կը մեռնիմ, իմ զաւակներս  
անտէր կը մնան։

Չէ ու չէ, հաց չտուաւ։

Անօթի մարդը ճամբայ չի կրնար քա-  
լել։ Մանուկ ետ մնաց և գիշեր էր երբ  
հասաւ աւերակ ջրաղաց մը։ Գաղաններէ  
վախնալով մտաւ հոն, որ գիշերը անցնէ։

Զրաղացին մէջ Մանուկ պատէն կախուած  
թմբուկ մը գտաւ :

2.

Գիշերը արջ մը , գայլ մը , աղուէս մը  
մտան ջրաղաց և իրարու քով նստան :

Գայլը հարցուց արջին .

—Արջ աղբար , ի՞նչպէս ես , ի՞նչ  
կ'ընես :

—Ի՞նչ ընեմ , գայլ աղբար , անտառ  
կ'երթամ եղէզներու , ծառերու արմատներ  
կը կրծեմ :

Աղուէսը յետոյ հարցուց .

—Գայլ աղբար , դուն ի՞նչպէս ես , ի՞ն-  
չով կ'ապրիս .

—Իմ վիճակս մի՛ հարցնէք , ժամանակ  
մըն է որ աչքս զրեր եմ ոչխարի մը հօտին,  
բայց սեւ շուն մը կայ , չի ձգեր որ մօտե-  
նամ : Թափաւորի տղան հիւանդ է , եթէ  
այդ շան արիւնով լուսնան բժիշկները թէ  
տղան կ'առողջանայ և թէ իմ բաղդը կը  
բացուի :

Մանուկ այս բանը միտքը պահեց :

—Աղուէս աղբար , դուն ի՞նչ կ'ընես ,  
հարցուց արջը :

—Ես ձեզ պէս զօրաւոր չեմ, բայց ունիմ խելք, օր մը անօթի չեմ մնար, շատ հարստութիւն ունիմ։ Պտուկ մը ոսկի ընկոյզի ծառի տակ, պտուկ մըն ալ ջրաղացի սէմին տակ թաղած եմ։

Մանուկ մտքէն ըսաւ.

—Այս աւելի աղէկ բան է։

Առաւ թմբուկը, թըմթըմբացուց, գազանները փախան։ Յետոյ ելաւ գնաց պիւզ, սև շան տիրոջ տունը հիւր եղաւ։ Մնոնց շատ մը նուէրներ ու ոսկի տուաւ։ Գիւղացին ալ ուղեց իրեն նուէր մը տալ.

—Ես բան չեմ ուղեր, ըսաւ Մանուկ, ինձի տուէք ձեր սեւ շունը։

Առաւ շունը, մորթեց և արիւնը տիկի մը մէջ լեցնելով ելաւ թագաւորին առջեւ.

—Ես բժիշկ եմ, ըսաւ, տղադ պիտի առողջացնեմ։

Թագաւորը շատ ուրախացաւ։ Մանուկ շան արիւնով երեք օր լուաց տղան և առողջացուց։ Թագաւորը անոր պալատ մը տուաւ և աչքին լոյսին պէս սկսաւ սիրել։ Մանուկ իր զաւակներն ալ բերաւ ու փառք տալով Աստուծոյ կ'ապրէր պալատին մէջ։

3.

Եղիա քաղքէ քաղաք պարապ տեղը  
պտտելով, եկաւ գտաւ իր հին ընկերը,  
հարցուց անոր թէ՝ ի՞նչպէս հարստացած է:  
Մանուկ մէկիկ մէկիկ պատմեց :


Եղիա ինքն ալ ուզեց հարստանալ,  
գնաց աւերակ ջրաղացը գտաւ։ Գաղաննե-  
րը ժողվուեցան, տեսան զինքը և կտոր  
կտոր ընելով կերան։

Անհաւատարիմ ընկերը այսպէս պատ-  
ժուեցաւ։

---

## 5.

ԱՐԾԱԹ ՄԱԶԵՐ, ԱՍԿԻ ԾԱՄԵՐ



### 1.

Թագաւորի տղան վրան զարկեր էր  
զիւղի մը մօտ, ծաղիկներով լեցուն մար-  
զագետնի մը վրայ: Գիւղէն երեք աղջիկներ  
զացին ծաղիկ քաղելու, նստան վրանի ե-  
աեւ, սկսան զրոյց ընել: Մէկը ըստւ.

—Թէ որ թագաւորի տղան զիս առնէ,  
այզի մը պիտի տնկեմ, որ խաղողի մէկ ող-  
կոյզը ինքն ու իր զօրքը ուտէ, նորէն չը-  
հատնի:

Երկրորդը ըստւ.

—Թէ որ զիս առնէ, զորդ մը պիտի  
զործեմ, որ ինքն ու իր զօրքը վրան նստի,  
կէսն ալ աւելնայ:

Երրորդը ըստւ.

—Թէ որ զիս առնէ, Աստուծմով աղ-  
ջիկ ու տղայ մը պիտի բերեմ, աղջկայ ծա-  
մեր արծաթ, տղայի մազեր ոսկի:

Թագաւորի տղան այս խօսքերը լսեց ,  
երեքն ալ առաւ :

2.

Անցաւ ժամանակ , երկուքը իրենց  
խօսքը չկատարեցին , երրորդը ըսածին պէս  
ծնաւ աղջիկ մը և մանչ մը , մէկուն ծամեր  
արծաթ , միւսին մազեր ոսկի :

Մէկալ երկուքը նախանձեցան , կանչե-  
ցին երկու պառաւ , շատ ոսկի ու արծաթ  
տուին , որ ճնածները կորսնցնեն , տեղը  
շան լակոտ գնեն : Մայրը դեռ ցաւերու մէջ  
էր ճնած ժամանակ , պառաւները առին  
տղան ու աղջիկը դրին տուփի մը մէջ ,  
տարին ծովը ձգեցին , զոյգ մըն ալ շան լա-  
կոտ բերին տղաբերին քովը դրին ու լուր  
տարին թագաւորի տղային թէ՝ հարսը զոյգ  
մը շան լակոտ բերաւ : Այս որ լսեց թա-  
գաւորը հրամայեց .

Այդ հարսը փաթթեցէք ուզտի կաշիի  
մը մէջ , զրէք զրան ետեւ , անցող դարձովը  
անոր երեսը թող թքնէ ու քար մը նետէ :

Այսպէս ալ եղաւ :

3.

Ծերունի մարդ մը և պառաւ կին մը զաւակ չունէին : Ծերունին ամեն առաւօտ ծովը ձուկի կ'երթար, Այդ օր ուռկանը նետեց, տուփ մը հանեց ծովէն, բացաւ տեսաւ որ աղջիկ մը ու տղայ մը, մէկ ծամեր արծաթ, միւսի մազեր ոսկի :

Ծերուկը ու պառաւը շատ ուրախացան : Զուր տաքցուցին, պղտիկները լուացին, անոնց մազերէն արծաթ ու ոսկի թափեցաւ : Արծաթը, ոսկին տուին կով մը առին, կոմին կաթով մեծցուցին քոյրն ու եղբայրը :

Ժամանակը եկաւ, ծերուկն ու պառաւը մեռան : Քոյր եղբայր զիրար կը հոգային. քոյրը խելացի էր, տղան կորիճ որսորդ :

Ասոնք պառաւէն լսեր էին, թէ իրենք ծովէն հանուած են, թէ թագաւորի դռան կինը իրենց մայրն է : Երբ աղջիկը մեծցաւ, ամէն օր աղքատի տեղ կը դնէր ինքինքը, կ'երթար թագաւորի տունը կը մտնէր, ամէն բան կը լսէր, կ'իմանար ու ետ կը դառնար :

Տղան որսի ժամանակ պատահեր էր իր հօրը, երեք անգամ անոր առջեւէն որսը

խլեր էր : Թագաւորը երբ իմացաւ որ այս-  
պէս կտրիճ որառդ մը կայ, կանչեց իր քով  
ամեն իրիկուն իրեն հետ կը կերցնէր կը  
խմցնէր : Տղան պատմեց թագաւորին թէ  
ինք քոյր մըն ալ ունի, երկուքն ալ ծովէն  
հանւած են :

Աղջիկը օր մը հասկցաւ, որ թագաւորի  
հարաներ իմացեր են իրենց ողջ ըլլալնուն  
ու կ'ուզեն զիրենք սպաննել տալ :

#### 4.

Իրիկունը եղբայրը տուն եկաւ, նետն  
ու աղեղը կախեց, կ'ուզէր թագաւորին մօտ  
երթալ, քոյրն ըստ անոր .

— Եղբայր, Բարակ շունդ նետդ տար :  
Տունէն ներս մտած ատենդ Բարակի ոտքը  
դրած տեղը կոխէ անցիր, որ վոսը չիյնաստ  
Փունջ մը վարդ ալ տար, դռանը ետեւը,  
կաշիի մէջ պըլլուած կնկան վրան նետէ :  
սեղան որ նատիս առաջին պատառը Բարա-  
կիդ տուր, եթէ մեռնի, դուն հաց մի ու-  
տեր, սեղանէն ել :

Տղան քրոջ ըսածին պէս կ'ընէ : Բա-  
րակը առաջին պատառը ուտելուն կը սատ-  
էի, տղան հաց չուտեր, կ'ելլայ տուն կ'եր-

թայ եղածը կը պատմէ քրոջը։ Քոյրը կ'ըսէ  
իրեն։

— Հացը թունաւորուած էր, ատոր հա-  
մար սատկեցաւ Բարակը, ոտքիդ տակը  
փոս մը փորուած էր. թագաւորի դռան ե-  
տեւի կինը մեր մայրն է։ Այս չարութիւն-  
ները ընողներն ալ թագաւորի երկու հարս-  
ներն են։

Ասոնք մտածեցին թէ ինչպէս իրենց  
մայրը ազատեն։ Թագաւորը իրենց տունը  
հրաւիրեցին ճաշի։

Քոյր և եղբայր ծառայութիւն ըրին։

Թագաւորը շատ սիրեց երկուքն ալ,  
ուզեց անոնց նուէր մը տալ ու ըսաւ։

— Ուզեցէք ինչ որ ձեր սիրտը կը սիրէ  
և ես պիտի տամ ձեզ։

— Թագաւոր, մեր մայրն ու հայրը տուր  
մեզի, ինզրեց աղջիկը։

— Ես ի՞նչպէս տամ, աղջիկս, ես Աստ-  
ուած չեմ, պատասխանեց թագաւորը։

— Դուն կրնաս տալ ըսաւ աղջիկը ու  
իրենց գլխէն անցածը բոլորն ալ պատմեց,  
իր ու եղբօրը գլուխները բացաւ, ցցուց  
իրենց արծաթ, ոսկի մազերը։

Թագաւորը ելաւ, զրկեց իր թոռները,

դարձաւ պալատ, անոնց մայրը հանեց կա-  
շիէն ու զաւակներուն հետ տուաւ իր  
տղային :

Միւս օր ժողով ըրաւ, զատաստան  
կտրեց, կրակ վառել տուաւ, այն երկու  
չար հարսերը կրակի մէջ նետելով վառեց :













# ՄԵՐ ԸՆԹԱՑԳՆԵՐԻ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵԶՈՒԻ ԱԽՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ**

	ԴՐ.
1. ԼՈՒՍԱԲԵՐ Այրքենարան	2.50
2. ԼՈՒՍԱԲԵՐ Ընթերցարան, Ա. Տարի	4.—
3. ԼՈՒՍԱԲԵՐ Գրաւոր, Ա. Տարի	2.—
4. ԼՈՒՍԱԲԵՐ Ուղեցոյց	10.—
5. ՄԵՐԱԳԵՏ, ժողովածու Հայ և օտար գրականութեանց, Բարձր Ինքացք	12.50
6. ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱԲՀ, Ա. Գիրք (Հեքիաթներ)	3.50

**ՄԱՅՈՒՄՆԵԼՅ ՏՈԽԵ ԱՐԵ**

**Խառըրեմի Բ. և Գ. Տարիները**

**Մասնիշական Առջաւոր, Բ. գիրք (Ուրիշնազոնի պատմութիւնը)**


**ԳԻՆ 3,50 ԴՐ.**

**Գիրմել աւդակի մեր հասցեին**

**ԱՐԵԻԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱԽԱՆՈՑ**

**Ե. Պոլիս, Մարտուճըլար Ապուս հի. Խան, թի. 19, 20**





3689

0008011

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0008011

